



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«ՄԱՐԿՈՍ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ «ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 45-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Մարկոս Հոլդինգ» ՍՊԸ դիմումի հիման վրա՝ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Ձ Ե Ց.**

1. «Մարկոս Հոլդինգ» ՍՊԸ (այսուհետ նաև՝ Դիմող, ներկայացուցիչ՝ փաստաբան Արա Զոհրաբյան) դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2024 թվականի հուլիսի 2-ին, որով Դիմողը խնդրել է.

«1. Սույն դիմումն ընդունել վարույթ:

2. «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասը (Ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2001 թվականի հոկտեմբերի 24-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել է 2001 թվականի նոյեմբերի 21-ին, ուժի մեջ է մտել 2001 թվականի դեկտեմբերի 7-ին) իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ ճանաչել ՀՀ Սահմանադրության 60-րդ, 61-րդ, 63-րդ և 75-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

3. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասը (Ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 1998 թվականի մայիսի 5-ին, ՀՀ

Նախագահի կողմից ստորագրվել է 1998 թվականի հունիսի 3-ին, ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ին) իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ ճանաչել ՀՀ Սահմանադրության 60-րդ, 61-րդ, 63-րդ և 75-րդ հոդվածներին հակասող և անվավեր»:

2. Գործի դատավարական նախապատմությունը

2.1. Թիվ S-2906 քաղաքացիական գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

Հայաստանի Հանրապետության տնտեսական դատարանը, քննելով թիվ S-2906 քաղաքացիական գործն ըստ հայցի՝ Կենտրոնական բանկի ընդդեմ Լևոն Գրիգորի Մարկոսի՝ հոգուտ «Կրեդիտ-Երևան բանկ» ՍՊԸ-ի՝ 5.600.000 ԱՄՆ դոլար բռնագանձելու պահանջի մասին, 2002 թվականի հոկտեմբերի 22-ի որոշմամբ հայցի ապահովման միջոցներ է կիրառել և 5.600.000 ԱՄՆ դոլարի չափով՝ **արգելանք դրել Լևոն Գրիգորի Մարկոսին պարկանող գույքի և դրամական միջոցների վրա, ինչպես նաև պարասխանողին պարկանող և նրա հետ փոխկապակցված «Հարիկ» ՍՊԸ-ի, «Մարկոս Քիմպրոմ» ՍՊԸ-ի, «Մարկոս Հոլդինգ» ՍՊԸ-ի, «Մարկոս Գրուպ» ՍՊԸ-ի, «Սրբերենկա Կոնսուլ» ՍՊԸ-ի, «Մարկոս Էներգո» ՓԲԸ-ի, «Մարկոս Շինմոնտաժ» ՓԲԸ-ի, «Մակոին Կոմմերշիալ Լիմիթեդ» ընկերության, «Արկոոս» ՍՊԸ-ի, «Երևանի հասարոցաշինական արտադրական միավորում» ԲԲԸ-ի, «Մարկոս Տորգ» ՍՊԸ-ի, «ՄԼ Ֆարմ» ՍՊԸ-ի գույքի և դրամական միջոցների վրա: Միաժամանակ, նույն որոշմամբ արգելվել է Լևոն Գրիգորի Մարկոսին պարկանող բաժնեմասերի վաճառքը կամ այլ կերպ օտարումը, ինչպես նաև այդ բաժնեմասերով հրավիրվող և անցկացվող ընդհանուր ժողովներում կամ այլ մարմինների նիստերում ընդունել համապարասխան ընկերությունների գույքի օտարման, գրավադրման վերաբերյալ որոշումներ:**

Տնտեսական դատարանի 2002 թվականի դեկտեմբերի 6-ի վճռով Կենտրոնական բանկի հայցը բավարարվել է և վճռվել է հոգուտ «Կրեդիտ-Երևան բանկ» ՍՊԸ-ի բռնագանձել 5.600.000 ԱՄՆ դոլար:

Վերոնշյալ վճռի դեմ բերված վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի 2003 թվականի հունվարի 17-ի որոշմամբ մերժվել է, իսկ Տնտեսական դատարանի 2002 թվականի դեկտեմբերի 6-ի վճիռը թողնվել է անփոփոխ:

2.2. Թիվ S-739/2003թ. (SՎ-124/2003թ.) գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

Տնտեսական դատարանը, քննելով թիվ S-739/2003 քաղաքացիական գործն ըստ հայցերի «Հատիկ» ՍՊԸ-ի, «Մարկոս Քիմպրոմ» ՍՊԸ-ի, «Մարկոս Հոլդինգ» ՍՊԸ-ի, «Մարկոս Գրուպ» ՍՊԸ-ի, «Սրետենկա Կոնսուլ» ՍՊԸ-ի, «Մարկոս Էներգո» ՍՊԸ-ի, «Մարկոս Շինմոնտաժ» ՓԲԸ-ի, «Մակոին Կոմերշիալ Լիմիթեդ» ընկերության, «Արկոնո» ՍՊԸ-ի, «Երևանի հաստոցաշինական արտադրական միավորում» ԲԲԸ-ի, «Մարկոս Տորգ» ՍՊԸ-ի, «ՄԼ Ֆարմ» ՍՊԸ-ի ընդդեմ Լևոն Գրիգորի Մարկոսի և Կենտրոնական բանկի՝ գույքը և դրամական միջոցներն արգելանքից հանելու պահանջի մասին, 2003 թվականի մարտի 19-ին վճռել է հայցերը մերժել:

Նշված որոշմամբ Տնտեսական դատարանն արձանագրել է. «ՀՀ տնտեսական դատարանի որոշմամբ հայցվոր ընկերությունների գույքի և դրամական միջոցների վրա արգելանք դնելը հիմնավորվում է հետևյալ պատճառաբանությամբ:

Դատաքննությամբ պարզվեց, որ Լևոն Մարկոսը հայցվոր ընկերություններից զգալի մասում ունի մասնակցություն՝ բաժնեմասի կամ բաժնետոմսի ձևով, իսկ այն ընկերություններում, որտեղ չունի բաժնեմասեր, դրանք նա կառավարում և վերահսկում է բաժնեմասեր ունեցող այլ ընկերությունների միջոցով:

Նշված ընկերությունների գույքի և դրամական միջոցների վրա դրված արգելանքը հնարավորություն է տալիս ապահովել ՀՀ տնտեսական դատարանի 06.12.2002թ. վճռի կատարումը, իսկ արգելանքը հանելը այդ կազմակերպությունների գույքը օտարելու կամ ակտիվներն այլ ձևով նվազեցնելու իրական հնարավորություն կստեղծի: Դրա արդյունքում էականորեն կարող է նվազել Լ. Մարկոսի կողմից վերահսկվող կազմակերպությունների գույքի արժեքը և հետևաբար Լ. Մարկոսի բաժնեմասերի, բաժնետոմսերի արժեքը, ինչն իր հերթին անհնար կդարձնի վերը նշված վճռի կատարումը կամ էականորեն կդժվարացնի այդ:

ՀՀ քաղ. դատ. օր.-ի 98-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն հայցի ապահովման միջոց է համարվում նաև այլ անձանց կողմից վեճի առարկային վերաբերող որոշակի գործողությունների կատարումն արգելելը:

Տվյալ պարագայում ՀՀ տնտեսական դատարանի որոշմամբ հայցվոր ընկերությունների գույքի և դրամական միջոցների վրա դրված արգելանքը հիմնավոր է, քանզի այդ

որոշմամբ ըստ էության արգելվել է այլ անձանց՝ վեճի առարկային վերաբերող որոշակի գործողությունների կատարումը և դա արվել է վերջինների գույքի վրա արգելանք դնելու միջոցով»:

2.3. Հիշատակված վճռի դեմ հայցվորների անունից ներկայացվել է վճռաբեկ բողոք: Վճռաբեկ դատարանը 2003 թվականի մայիսի 8-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը բավարարել է մասնակի. որոշել է. «(...) բեկանել ՀՀ տնտեսական դատարանի 19.03.2003թ. վճռի՝ «Հատիկ» ՍՊԸ-ի, «Մարկոս Հոլդինգ» ՍՊԸ-ի, «Մակոին Կոմմերշիալ Լիմիթեդ» ՍՊԸ-ի և «Մարկոս Էներգո» ՓԲԸ-ի գույքը և դրամական միջոցներն արգելանքից հանելու մասերը և գործն այդ մասերով ուղարկել նույն դատարան նոր քննության: Վճռի մնացած մասերը թողնել անփոփոխ»:

Վճռաբեկ դատարանը 2003 թվականի մայիսի 8-ի թիվ ՏԴ-3-511/2003թ. որոշմամբ արձանագրել է հետևյալը.

«ՀՀ տնտեսական դատարանը հայցը մերժելիս պատճառաբանել է, որ «Լևոն Մարկոսը հայցվոր ընկերություններից զգալի մասում ունի մասնակցություն՝ բաժնեմասի կամ բաժնետոմսի ձևով, իսկ այն ընկերություններում, որտեղ չունի բաժնեմասեր, դրանք նա կառավարում և վերահսկում է բաժնեմասեր ունեցող այլ ընկերությունների միջոցով»:

Նման պայմաններում հիմնավոր է «Հատիկ», «Մարկոս Հոլդինգ», «Մակոին Կոմմերշիալ Լիմիթեդ» ՍՊ ընկերությունների և «Մարկոս Էներգո» ՓԲ ընկերության մասերով նյութական և դատավարական իրավունքի խախտման մասին բողոքի պատճառաբանությունը, քանի որ ՀՀ Արդարադատության նախարարության պետական ռեգիստրի 23.01.03թ. թիվ 3-2/954 պատասխանի համաձայն «Հատիկ» ՍՊ ընկերության հիմնադիրներն են Հայկ Վարդանյանը, Գեորգի Հարությունյանը և Աշոտ Վարդանյանը, «Մարկոս Հոլդինգ» ՍՊ ընկերության հիմնադիրը՝ Գասպար Հովհաննիսյանը, «Մարկոս Էներգո» ՓԲ ընկերության հիմնադիրը՝ «Մարկոս Հոլդինգ» ՍՊ ընկերությունը, իսկ «Մակոին Կոմմերշիալ Լիմիթեդ» ՍՊ ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում գրանցված չէ, այն գրանցված է Կիպրոսում: Նշված ընկերություններում Լ. Գ. Մարկոսի մասնակցության վերաբերյալ որևէ ապացույց գործում առկա չէ:

«Արկոն», «Մարկոս Գրուպ», «Մարկոս Քիմպրոմ», «Սրբերենկա Կոնսուլ», «ՄԼ Ֆարմ», «Մարկոս Տորգ» ՍՊ ընկերությունների, «Երևանի հասարոցաշինական արտադրական միավորում» ԲԲ և «Մարկոս Ճինմոնտաժ» ՓԲ ընկերությունների մասերով

բողոքի պատճառաբանությունը հիմնավոր չէ, քանի որ Լ. Գ. Մարկոսը «Արկոնոս», «Մարկոս Գրուպ», «Մարկոս Քիմպրոմ», «Սրեպրենկա Կոնսուլ», «ՄԼ ֆարմ» ՍՊ ընկերությունների 100%, «Մարկոս Տորգ» ՍՊ ընկերությունում 70% բաժնեմասների մասնակից է, «Երևանի հասարոցաշինական արտադրական միավորում» ԲԲ ընկերության 66,5% բաժնետոմսերի, իսկ «Մարկոս Շինմոնտաժ» ՓԲԸ-ի 100% բաժնետոմսերի սեփականատերն է, որոնց վրա կարող է բռնագանձում տարածվել Լ. Գ. Մարկոսի պարտավորություններով»:

Տնտեսական դատարանը 2003 թվականի մայիսի 26-ի որոշմամբ քաղաքացիական գործն ընդունել է վարույթ, 2003 թվականի օգոստոսի 13-ին որոշում է կայացրել թիվ ՏՎ-124/2003թ. քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու մասին:

2.4. 2023 թվականի մայիսի 15-ին թիվ ՏՎ-124/2003 քաղաքացիական գործը հանձնվել է Վերաքննիչ քաղաքացիական դատարանին, որը 2023 թվականի մայիսի 31-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանը 2023 թվականի նոյեմբերի 30-ի որոշմամբ «Մարկոս Հոլդինգ» ՍՊԸ-ի, «Մարկոս Էներգո» ՓԲԸ-ի և «Մակոին Կոմերշիալ Լիմիթեդ» ՍՊԸ-ի հայցերն ընդդեմ Լևոն Գրիգորի Մարկոսի և Կենտրոնական բանկի՝ գույքը և դրամական միջոցներն արգելանքից հանելու պահանջի մասին, մերժել է:

Հիշատակված որոշմամբ **Վերաքննիչ քաղաքացիական դատարանն արձանագրել է հետևյալը.**

«Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ Վճռաբեկ դատարանն ըստ էության իրավաչափ է գնահատել ընկերությունների գույքի և դրամական միջոցների վրա դրված արգելանքների պահպանումը պատասխանող Լևոն Մարկոսի ընկերությունների մասնակից հանդիսանալու փաստի ուժով, հետևաբար նշված նյութաիրավական հարցի իրավաչափությանը Վերաքննիչ դատարանն ըստ էության չի անդրադառնում:

Վճռաբեկ դատարանի սահմանած գործի քննության ծավալի շրջանակներում Վերաքննիչ դատարանը հարկ է համարում անդրադառնալ «Մարկոս Հոլդինգ» ՍՊԸ-ում, «Մակոին Կոմերշիալ Լիմիթեդ» ՍՊԸ-ում և «Մարկոս Էներգո» ՓԲԸ-ում, Լևոն Մարկոսի՝ մասնակցություն ունենալու փաստերին և ըստ այդմ անդրադառնալ նշված ընկերությունների գույքի և դրամական միջոցների վրա Դատարանի կողմից կիրառված արգելանքների վերացման հարցին:

(...)

Անդրադառնալով «Մարկոս Հոլդինգ» ՍՊԸ-ում Լևոն Մարկոսի մասնակցություն ունենալու հարցին՝ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ գործի քննության համար նշանակություն ունեցող թիվ 9 փաստից հետևում է, որ ՀՀ Տնտեսական դատարանի 29.08.2003 թվականի թիվ Տ-2131/2003թ. վճռով «Մարկոս Հոլդինգ» ՍՊԸ-ի բաժնեմասի նկատմամբ վերականգնվել է Լևոն Մարկոսի սեփականության իրավունքը, հետևաբար «Մարկոս Հոլդինգ» ՍՊԸ գույքը և դրամական միջոցներն արգելանքներից հանելու պահանջը ՀՀ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վերաքննիչ դատարանը գնահատում է ոչ իրավաչափ»:

2.5. Վճռաբեկ դատարանի 2024 թվականի մայիսի 24-ին որոշմամբ թիվ ՏՎ-124/2003 քաղաքացիական գործով Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2023 թվականի նոյեմբերի 30-ի որոշման դեմ «Մարկոս Հոլդինգ» ՍՊԸ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է:

Վճռաբեկ դատարանը հիշյալ որոշմամբ արձանագրել է. «Համեմատական վերլուծության ենթարկելով բողոքարկվող դատական ակտում և թիվ ԵՄԴ/3367/02/15 քաղաքացիական գործով 07.04.2017 թվականին ՀՀ վճռաբեկ դատարանի որոշման մեջ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի վերաբերյալ արտահայտված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ չի հիմնավորվում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված պայմանի առկայությունը, քանի որ Վերաքննիչ դատարանը 30.11.2023 թվականին որոշում կայացնելիս «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածը չի կիրառել և դրա վերաբերյալ որևէ մեկնաբանություն չի արել»:

3. Դիմողի դիրքորոշումները

3.1. Դիմողը, ներկայացնելով թիվ Տ-2906 քաղաքացիական գործի դատավարական նախապատմությունը, նշում է, որ վիճարկվող իրավադրույթները՝ դրանց իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ, հակասում են Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին, 3 և 4-րդ մասերին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին և 75-րդ հոդվածին:

3.2. Դիմողը, անդրադառնալով վիճարկվող դրույթների և Սահմանադրության՝ անձի սեփականության իրավունքն ամրագրող 60-րդ հոդվածի հարաբերակցությանը, նշում է. «Սեփականության իրավունքը դասվում է բացարձակ իրավունքների շարքին, որի սահմանափակումը, կամ առավել ևս սեփականության իրավունքից զրկումը հնարավոր է խիստ բացառիկ դեպքերում, երբ առկա է օրենքով սահմանված դեպք, որն էլ իր հերթին պետք է պայմանավորված լինի հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

3.3. Մեջբերված դիտարկման հիման վրա Դիմողը եզրահանգում է. «Իրավաբանական անձի գույքի արգելադրումը, իսկ հետագայում էլ հարկադիր վաճառքի հնարավորությունը ոչ միայն որևէ աղերս չունի հանրային շահի հետ և նախատեսված չէ օրենքով, այլ նաև ուղղակիորեն արգելված է «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով»:

3.4. Դիմողը գտնում է, որ Սահմանադրության 60-րդ հոդվածով նախատեսված՝ սեփականության իրավունքի սահմանափակման բոլոր նախապայմանները բացակայել են, և վիճարկվող դրույթներին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության արդյունքում Դիմողը զրկվել է իր սեփականության իրավունքից: Մասնավորապես, Դիմողը նշում է. «Ակնհայտ է, որ հանրությունը կամ այլոք որևէ կապ չունեն իրավունքի մեկ սուբյեկտի պարտավորություններով մեկ այլ սուբյեկտին սեփականագրկելու գործընթացի հետ: (...) Ընկերությունը զրկվել է սեփականության իրավունքից իր մասնակիցներից միայն մեկի պարտավորությունների համար, որի շահերը առհասարակ հանրային հետաքրքրություն ներկայացնել չի կարող»:

3.5. Դիմողը, անդրադառնալով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասին, նշում է. «Թեև ձևական առումով Ընկերությունն իրացրել է դատական պաշտպանության իր իրավունքը, սակայն այն չի եղել արդյունավետ, քանի որ որևէ ատյանի դատարան չի անդրադարձել Ընկերության փաստարկներին պարտապան չլինելու մասով և չի պատճառաբանել, թե հատկապես որ իրավական նորմն է հնարավորություն տալիս մեկ սուբյեկտի պարտավորություններով բռնագանձում տարածել մեկ այլ սուբյեկտի գույքի վրա, իսկ ՀՀ վճռաբեկ դատարանն առհասարակ վարույթ չի ընդունել Ընկերության բողոքը և չի իրականացրել վերջինիս ըստ էության քննություն և դա այն դեպքում, երբ առնվազն դատական սխալն ակնհայտ էր»:

3.6. Դիմողը գտնում է, որ թեև ձևական առումով ինքն իրացրել է դատական պաշտպանության իր իրավունքը, այնուամենայնիվ, այն չի եղել արդյունավետ, քանի որ որևէ ատյանի դատարան չի անդրադարձել պարտապան չլինելու մասով իր փաստարկներին և չի պատճառաբանել, թե հատկապես ո՞ր իրավական նորմն է հնարավորություն տալիս մեկ սուբյեկտի պարտավորություններով բռնագանձում տարածել մեկ այլ սուբյեկտի գույքի վրա, իսկ Վճռաբեկ դատարանն առհասարակ վարույթ չի ընդունել իր բողոքը և չի իրականացրել վերջինիս ըստ էության քննություն, և դա այն դեպքում, երբ առնվազն դատական սխալն ակնհայտ էր: Բացի դրանից, Սահմանադրության 75-րդ հոդվածը սահմանում է նաև իրավունքի արդյունավետ պաշտպանության հնարավորություն, որը չի կարող իրացվել միայն դատարան դիմելու հնարավորություն նախատեսելով:

4. Պատասխանողի դիրքորոշումները

4.1. Ազգային ժողովը (այսուհետև՝ Պատասխանող), անդրադառնալով վիճարկվող դրույթների վերաբերյալ Դիմողի դիտարկումներին, արձանագրել է. «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումն ինքնին չի հակասում Սահմանադրությանը, իրավակիրառ պրակտիկայում նշված նորմին այլ մեկնաբանություն չի տրվել: «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասով հստակ ամրագրված է արգելանքի տակ գտնվող գույքի պատկանելության վերաբերյալ վեճ ծագելու դեպքում շահագրգիռ անձի՝ գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցով գույքի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան դիմելու իրավունքը: Նշված նորմը կամ այդ նորմին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը Սահմանադրության 60-րդ հոդվածին հակասելու վերաբերյալ Դիմողը հիմնավորումներ չի ներկայացրել:

4.2. Ըստ Պատասխանողի՝ Դիմողի՝ խնդրո առարկա իրավադրույթների ենթադրյալ հակասահմանադրականությանն առնչվող հիմնավորումները սահմանափակվում են դրանց՝ Սահմանադրության 61, 63 և 75-րդ հոդվածներին չհամապատասխանելու դիտարկմամբ:

4.3. Անդրադառնալով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությանը՝ Պատասխանողը նշում է, որ տվյալ նորմի կիրառմամբ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի խախտում տեղի

ունենալ չէր կարող, քանի որ նշված դրույթով հստակ ամրագրվում է արգելանքի տակ գտնվող գույքի պատկանելության վերաբերյալ վեճ ծագելու դեպքում՝ շահագրգիռ անձի՝ գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցով դատարան դիմելու իրավունքը:

4.4. Պատասխանողը, մասնավորապես, նշում է. «Նշված կարգավորումը որևէ տարրնկալում չի առաջացնում, առավել քան հստակ է: Հետևաբար՝ նշված դատական պաշտպանության միջոցն ինքնին մատչելի, գործնականում կիրառելի և արդյունավետ է: Բացի այդ քննարկվող գործի շրջանակներում Դատարանը քննարկվող նորմի տրամաբանությանը հակասող որևէ մեկնաբանություն չի տվել: Ինչպես նաև այդ նորմի քննարկմամբ Դիմողի որևէ իրավունք չի սահմանափակվել»:

4.5. Անդրադառնալով «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ Դիմողի դիրքորոշմանը՝ Պատասխանողը գտնում է, որ տվյալ նորմի՝ Սահմանադրության 61, 63 և 75-րդ հոդվածներին հակասելու առնչությամբ Դիմողի կողմից բավարար հիմնավորումներ չեն ներկայացվել:

4.6. Պատասխանողը, դիտարկելով «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավակարգավորման և արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի հարաբերակցությունը, արձանագրում է, որ վիճարկվող դրույթը Սահմանադրության 61, 63 և 75-րդ հոդվածներին համապատասխանելիության տեսանկյունից խնդրահարույց չէ:

4.7. Ամփոփելով իր դիրքորոշումները՝ Պատասխանողը եզրահանգել է.

«Ըստ էության Դիմողն օրենքի համապատասխան նորմի սահմանադրականությունը վիճարկում է ոչ թե նորմի կամ դրա՝ իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության և Սահմանադրության միջև ենթադրյալ հակասության համատեքստում, ինչը Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումների համար պարտադիր պայման է, այլ Դիմողի ներկայացրած պնդումներն իրականում ուղղված են վիճարկվող նորմերի ոչ իրավաչափ կիրառմանը: Ըստ էության, Դիմողը, ձևականորեն բարձրացնելով իրավական նորմի սահմանադրականության հարց, իրականում առաջ է քաշում իրավանորմի կիրառման իրավաչափության հարց»:

4.8. Վերոգրյալի հիման վրա Պատասխանողը խնդրել է.

««ՄԱՐԿՈՍ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊ ընկերության դիմումի հիման վրա՝ «Սահմանափակ

պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի և իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

Կամ

«ՄԱՐԿՈՍ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊ ընկերության դիմումի հիման վրա՝ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի և իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ընդունել որոշում վիճարկվող դրույթը և իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությունները Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին»:

5. Սահմանադրական դատարանը, ուսումնասիրելով սույն անհատական դիմումը, Պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը, գտնում է, որ սույն գործի վարույթը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ Սահմանադրական օրենք) 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին (Սահմանադրական դատարանը կարճում է գործի վարույթը գործի քննության ցանկացած փուլում, եթե բացահայտվել են Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքեր) համապատասխան՝ ենթակա է կարճման՝ ներքոնշյալ հիմքով և պատճառաբանությամբ.

Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում սույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված այլ դեպքերում: Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան՝ անհատական դիմումով գործի քննությունը կարող է մերժվել նաև այն դեպքում, երբ **անհատական դիմումն ակնհայտ անհիմն է:**

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է

դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված են այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության պարագայում ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով անհատական դիմում կարող է ներկայացնել Սահմանադրական դատարան, երբ՝

ա) առկա է դատարանի վերջնական ակտը,

բ) սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները,

գ) դիմողը վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը **հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝** հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի՝ «*Ընկերության և նրա մասնակիցների պարտասխանատվությունը*» վերտառությամբ 5-րդ հոդվածի 2-րդ մասով օրենսդիրն ուղղակիորեն սահմանել է ընկերության՝ իր մասնակիցների պարտավորությունների համար պատասխանատվության ենթարկելու արգելք՝ առանց որևէ վերապահման:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի՝ «*Այլ անձանց իրավունքների պաշտպանությունը պարտապանի գույքի վրա արգելանք դնելիս*» վերտառությամբ 45-րդ հոդվածի 1-ին մասից բխում է, որ վիճարկվող կարգավորմամբ օրենսդիրը երաշխավորում է պարտապանի գույքի վրա արգելանք դնելիս այլ անձանց իրավունքների պաշտպանությունն այն դեպքում, երբ ծագում է արգելանքի տակ գտնվող գույքի պատկանելության վերաբերյալ վեճ: Սույն պարագայում վիճարկվող կարգավորման ուժով շահագրգիռ անձն իրավունք ունի գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցով դիմելու գույքի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան: Համապատասխան

հայցով դատարան դիմելը դատական պաշտպանության իրավունքի իրացման առաջնային քայլն է, նման պաշտպանություն հայցելու իրավական հնարավորությունը, որը տվյալ գործի շրջանակներում Դիմողի կողմից անխոչընդոտ կերպով իրացվել է:

Սույն գործի նյութերի ուսումնասիրության արդյունքում Սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմումում բացակայում են վիճարկվող դրույթների ենթադրյալ հակասահմանադրականության, վիճարկվող դրույթների և Դիմողի սահմանադրական իրավունքների խախտման միջև պատճառահետևանքային կապի առկայության վերաբերյալ բավարար հիմնավորումները, մասնավորապես՝ չի հիմնավորվել, թե վիճարկվող դրույթները (իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ) ինչպես են ազդել Դիմողի հիմնական իրավունքների վրա և ինչպես են հանգեցրել այդ իրավունքների խախտման:

Բացի դրանից, վերաբերելի կարգավորումները, այն է՝ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ընկերության՝ իր մասնակիցների պարտավորությունների համար պատասխանատվության ենթարկելու ուղիղ և որևէ վերապահում չնախատեսող արգելքը, ինչպես նաև «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ պարտապանի գույքի վրա արգելանք դնելիս այլ անձանց իրավունքների պաշտպանության իրավական հնարավորությունը, համադրելով Դիմողի կողմից ներկայացված դիրքորոշումների հետ, Սահմանադրական դատարանը նշում է, որ վիճարկվող դրույթների և Դիմողի հիմնական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի միջև անմիջական պատճառահետևանքային կապը չի հիմնավորվում:

Սահմանադրական դատարանը փաստում է նաև, որ Դիմողի կողմից չի հիմնավորվել «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասին, ինչպես նաև «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասին իրավակիրառ պրակտիկայում տրված ենթադրյալ հակասահմանադրական մեկնաբանության առկայությունը:

Այս համատեքստում հարկ է վկայակոչել Սահմանադրական դատարանի 2022 թվականի հունվարի 20-ի ՍԴԱՌ-14 աշխատակարգային որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումն առ այն, որ «(...) Սահմանադրական դատարանը շեշտում է, որ

դիմումը հիմնավորված համարելու համար անհրաժեշտ է, որ այն միաժամանակ համապատասխանի, ի թիվս այլնի, հետևյալ պահանջներին.

- հստակ պարունակի իրավակիրառ պրակտիկայի կողմից նորմին տրված մեկնաբանությունը, այսինքն՝ իրավակիրառի դատողության, վերլուծության, եզրահանգման այն հատվածը, որը, Դիմողի կարծիքով, հանդիսանում է վիճարկվող նորմի մեկնաբանություն,

- հիմնավոր փաստարկներ նախատեսի, որոնցով կմատնանշվի պատճառահետևանքային կապը՝ խախտված հիմնարար իրավունքի կամ ազատության և իրավակիրառ մեկնաբանության միջև, այսինքն՝ պարունակի հիմնավորումներ, թե իրավակիրառի մեկնաբանությունն ինչպես է ազդել հիմնարար իրավունքի կամ ազատության վրա և ինչպես է հանգեցրել դրա ոչ իրավաչափ սահմանափակման, խաթարման կամ այլ կերպ խախտման»:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ Սահմանադրական դատարան ներկայացվող **անհատական դիմումի հիմնավորված լինելու պահանջը չի կարող պահանված համարվել բոլոր այն դեպքերում, երբ դիմողը պարզապես հղում է կատարում Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված որևէ հիմնական իրավունքի/ազատության՝ առանց ներկայացնելու բավարար հիմնավորումներ վիճարկվող օրինադրույթի և այդ հիմնական իրավունքի/ազատության ենթադրյալ խախտման փաստի միջև պատճառահետևանքային կապի առկայության վերաբերյալ:**

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Դիմողը սույն անհատական դիմումի շրջանակներում բավարար հիմնավորումներ չի ներկայացրել իր՝ Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված հիմնական իրավունքների խախտման, հետևաբար՝ դրանց ենթադրյալ խախտման փաստի և վիճարկվող դրույթի միջև պատճառահետևանքային կապի առկայության վերաբերյալ:

Մասնավորապես՝ Դիմողը, վկայակոչելով Սահմանադրության 60-րդ հոդվածը և այդ հոդվածով պաշտպանվող՝ սեփականության հիմնական իրավունքի՝ բացառապես օրենքով և միաժամանակ՝ միայն հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով սահմանափակելի լինելու հանգամանքը, վկայակոչելով, առանց հղում կատարելու Սահմանադրության 63-րդ հոդվածին, արդար դատաքննության իրավունքին վերաբերող իր իրավունքները, մասնավորապես՝

պատճառաբանված դատական որոշում ստանալու իրավունքը, վկայակոչելով Սահմանադրության 75-րդ հոդվածը, ընդունել է, որ թեև ձևական առումով Ընկերությունն իրացրել է դատական պաշտպանության իր իրավունքը, սակայն այն չի եղել արդյունավետ, քանի որ որևէ աստիճանի դատարան չի անդրադարձել Ընկերության փաստարկներին պարտապան չլինելու մասով և չի պատճառաբանել, թե հատկապես ո՞ր իրավական նորմն է հնարավորություն տալիս մեկ սուբյեկտի պարտավորություններով բռնագանձում տարածել մեկ այլ սուբյեկտի գույքի վրա, իսկ ՀՀ Վճռաբեկ դատարանն առհասարակ վարույթ չի ընդունել Ընկերության բողոքը և չի իրականացրել վերջինիս ըստ էության քննություն, և դա այն դեպքում, երբ առնվազն «դատական սխալն ակնհայտ էր»:

Այնուամենայնիվ, Դիմողը պատշաճ չի հիմնավորել, թե դատավարական երաշխիքների թեկուզ ձևական պահպանվածության պայմաններում ինչպե՞ս է խաթարվել նշված իրավունքների իրացումը, ինչպես նաև՝ ինչպե՞ս է դատարանի կողմից՝ Ընկերության նշված փաստարկներին չանդրադառնալը կամ Վճռաբեկ դատարանի կողմից՝ գործն ըստ էության չքննելը հակասահմանադրական դարձնում վիճարկվող օրենքը կամ դրա մեկնաբանությունը: Որպես նման հնարավոր փաստարկ, Դիմողը նշել է դատական սխալի «առնվազն ակնհայտ լինելը», ինչը, Սահմանադրական դատարանի գնահատմամբ, չի կարող պատշաճ հիմնավորում ծառայել վիճարկվող դրույթների կամ դրանց դատական մեկնաբանության՝ Սահմանադրությանը հակասելու փաստը ճանաչելու համար:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ Սահմանադրական դատարանը եզրահանգում է, որ սույն անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, ուստի՝ սույն գործի վարույթը Սահմանադրական դատարանի կողմից ենթակա է կարճման՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, ինչպես նաև 69-րդ հոդվածի 1-ին, 2 և 5-րդ մասերի պահանջներով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, ինչպես նաև 69-րդ հոդվածի 1-ին, 2 և 5-րդ մասերի պահանջներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

«ՄԱՐԿՈՍ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ դիմումի հիման վրա՝ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ**



Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

10 դեկտեմբերի 2024 թվականի
ՍԴԱՈ-188